ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հասցե՝ 2801, Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ
Աշոցք համայնք, գ Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245) 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 սեպտեմբերի 2020 թվականի N 125-Ա

ՍՈՖՅԱ ԳՈՒՐԳԵՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 24-ի N 39-Ն որոշմամբ և հիմք ընդունելով աճուրդներ և մրցույթներ կազմակերպող ու անցկացնող Աշոցքի համայնքային հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 7-ի N 3 արձանագրության 1-ին կետը, ***որոշում եմ***.

1. Սոֆյա Գուրգենի Խաչատրյանին վարձակալության իրավունքով, քսանհինգ տարի ժամկետով, տարեկան 3276 (երեք հազար երկու հարյուր յոթանասունվեց) դրամ վարձավճարով, գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու նպատակով, օգտագործման տրամադրել Աշոցք համայնքի սեփականություն հանդիսացող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Սիզավետ գյուղում գտնվող, 08-106-0121-0064 կադաստրային ծածկագրով, 1.00006 հեկտար գյուղատնտեսական նշանակության (4-րդ կարգի վարելահող) հողամասը:
2. Պարտավորեցնել քաղաքացի Սոֆյա Գուրգենի Խաչատրյանին՝ Աշոցքի համայնքապետարանի հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի վարձակալության պայմանագիր և դրանից բխող իրավունքները օրենքով սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020 թվականի սեպտեմբերի 14
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 սեպտեմբերի 2020 թվականի N 126 - Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՆՈՐԱՅՐ ԱՂԵԿՅԱՆԻՆ, ԹԵՐԵԶԱ ԱՂԵԿՅԱՆԻՆ, ԱՐՇԱԿ ԱՂԵԿՅԱՆԻՆ ԵՎ ՑՈՂԻԿ ԱՂԵԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-015-037-042-001-001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով, 48-րդ կետով և հիմք ընդունելով Նորայր Աղեկեյանի 2020 թվականի սեպտեմբերի 15-ի Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը, **որոշում եմ**.

քաղաքացիներ՝ Նորայր Աղեկյանին, Թերեզա Աղեկյանին, Արշակ Աղեկյանին և Ցողիկ Աղեկյանային սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետութուն, Շիրակի մարզ, գյուղ Աշոցք, 3-րդ փողոց, շենք 6, բնակարան 4 հասցեում գտնվող 08-015-037-042-001-001 կադաստրային ծածկագրով բնակարանին /գրանցված՝ 2005 թվականի օգոստոսի 16-ին, վկայական N 1176321/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետութուն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 3-րդ փողոց, շենք 6, բնակարան 4:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020 թվականի սեպտեմբերի 15
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 սեպտեմբերի 2020 թվականի N 127 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇՈՑՔ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 0.45 ՀԵԿՏԱՐ (3-ՐԴ ԿԱՐԳԻ ԽՈՏՀԱՐՔ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 08-015-066-004) ԱՇՈՑՔ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՍԵՐԳԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 79-րդ հոդվածի 2-րդ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին, 6-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 24-ի N 39-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանում 2020 թվականի օգոստոսի 31-ին և սեպտեմբերի 7-ին համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը բաց մրցույթով օգտագործման նպատակով, վարձակալության տրամադրելու նպատակով տեղի ունեցած մրցույթը և կրկնամրցույթը Աշոցք բնակավայրի տարածքում գտնվող, 08-015-066-004 կադաստրային ծածկագրով 0.45 հեկտար (3-րդ կարգի խոտհարք) մակերեսով հողամասի մասով չեն կայացել և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք գյուղի բնակիչ Սերգեյ Սարգսյանի 2020 թվականի սեպտեմբերի 17-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք գյուղում գտնվող Աշոցք համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 0.45 հեկտար (3-րդ կարգի խոտհարք, կադաստրային ծածկագիր՝ 08-015-066-004) 3 տարի ժամկետով, ամսական 151 (մեկ հարյուր հիսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ վարձավճարով օգտագործման

տրամադրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք գյուղի բնակիչ Սերգեյ Սարգսյանին:

2. Քաղաքացի Սերգեյ Սարգսյանի հետ կնքել խոտհարքից օգտվելու պայմանագիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2020 թվականի սեպտեմբերի 18
գյուղ Աշոցք